ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ**

**18/դեկտեմբեր/2018**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10**
**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու …….7…. անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Արման Հայրապետյանը:

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը**

Լսեցին
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. Վարդան Հովհաննիսյան/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում տարածքային զարգացման աճի բևեռի ձևավորում» ծրագրի իրականացման շրջանակում գնման գործընթաց կազմակերպելու մասին.

*զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան*